# ՔՅԱԼԲԱՋԱՐԻ ՇՐՋԱՆ

## 78. ԴԱԴԻ ՎԱՆՔ

Այս անունը կապված է Թադէոս առաքյալի աշակերտ Դադի հետ, բայց հաճախ կոչվել է նաև Խութա վանք՝ մոտակա գյուղի և քարախութի անվամբ, որի վրա շինված է։

Դադի վանքի հիմնարկության ժամանակը հայտնի չէ. գրավոր տեղեկություններ են պահպանվել Կաղանկատվացու մոտ, ուր IX դարի ազգամիջյան ընդհարումների վայրը հիշատակվում է «ի Խորաձորն, որ կոչի Դադոյի վանք»[1]։ Նկատի ունենալով վանքում կիսավեր մնացած ընդարձակ բազիլիկ շենքը և Թադէոս առաքյալի անվան հետ կապված հուշարձանների հնությունը, Դադի վանքի հիմնարկությունը պետք է վերագրել IV—V դարերին։

Վանքում պահպանված արձանագրություններից չորս հնագույնները վերաբերում են XII դարի վերջին քառորդին։ Բազմաթիվ այլ արձանագրությունները և գրավոր տեղեկությունները վկայում են, որ XII դարից սկսած վանքի հովանավորողը եղել է Արցախի ամենանշանավոր վախթանգյան տոհմը, և վանքը՝ նրա հոգևոր կենտրոնն ու գամբարանատունը։ Վանքի առաջնորդները ևս այս տոհմից են նշանակվել։ Առավել նշանակալից վաստակ ունի վախթանգյան տոհմի տիկին Արզու խաթունը. նա է կառուցել վանական շենքերից ամենագեղեցիկն ու մեծածավալը՝ ս. Նշան կոչվող գմբեթավոր եկեղեցին, որն իր ճարտարապետական և կառուցողական վարպետությամբ Արցախի լավագույն հուշարձաններից մեկն է։ Արվեստագետ և հասարակական գործիչ Արզու խաթունը դուստրն է Մահկանաբերդի Քուրդ իշխանի, որը հովանավորում և աջակցում էր Մխիթար Գոշի գործունեությանը։ Արզու խաթունն ամուսնանալով Արցախի իշխան Վախթանգի հետ, իր հասարակական գործունեությանը զուգակցեց նաև ասեղնագործությունը։ Արզու խաթունն իր աղջիկների հետ ասեղնագործել է մի քանի նշանավոր վանքերի վարագույրները (Հաղբատ, Մակարավանք, Դադի վանք և այլն)։ Ժամանակի պատմագիր և ականատես Կ. Գանձակեցին նկարագրելով այդ վարագույրները, նրանց արվեստը համեմատում է բիբլիական նկարիչներ Բեսելիելի և Եղիաբի հետ[2]։

Դադի վանքը ունեցել է 10-ից ավելի շինություններ։ Դրանց մեծ մասը եղել են պարսպապատ, որի ներսում երկու շարքի կանգնած են եկեղեցիները, իսկ արևմտյան ծայրում առաջնորդարանի կրկնահարկ շենքն է։ Եկեղեցիները մեծ մասամբ կանգուն են, 2—3-ը՝ կիսավեր։ Պարսպից դուրս հյուսիսային կողմի թեք անտառապատ լանջին մնում են երկու մատուռների և այլ շինությունների կիսավեր մնացորդներ։ Եկեղեցիներից միայն Արզու խաթունի շինած գմբեթավոր եկեղեցին է սրբատաշ քարերով կերտված, մյուսները կոփածո քարերով են, կան նաև ընդարձակ և ճարտարապետական արժեք ներկայացնող եկեղեցիներ ու գավիթներ։ Արվեստի նմուշներ են նաև զանգակատունը և նրա մեջ կանգնած երկու խաչքարերը։

Դադի վանքը գտնվում է Քյալբաջարի շրջանում, Լեռնային Ղարաբաղի սահմանից 5—6 կմ հեռու, Թարթառի ձախ ափին տարածված քրդաբնակ Քոլանլար գյուղի եզրին։

Ներկա ժողովածուն այս վանքից ամփոփում է 58 արձանագրություն, որոնցից 18-ը հրատարակվում են առաջին անգամ։

[1] Մ. Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 368։
[2] Կ. Գանձակեցի, Պատմութիւն, Երևան, 1961, էջ 215—216։

**707. ԽԱՉՔԱՐ,** *մեծ, ընկած է գմբեթավոր եկեղեցու բեմի վրա, կողքին.*



ԵՍ ՀԱՍԱՆ, ՈՐԴԻ Վ.Ա|ԽՏԱՆԳԱ. ՏԷ|Ր ՀԱԹԵՐՈ| ԵՒ ՀԱՆ.ԴԱԲԵՐԴՈ, ԽԱՉ|ԻՆԱԲԵՐԴՈ ԵՒ ՀԱԻԱԽ| ԱՂ.ԱՑԻՆ. ԿԱՑԻ ՅԱ.Ի|ԱԳՈՒԹԵԱՆ ԱՄՍ| :Խ: (40) ՇԱՏ ՊԱՏԵՐԱ|ԶՄԱՒ ԵՒ ՅԱՂ.ԹԵՑԻ. ԹՇՆԱՄԵԱՑ ԻՄՈՑ ԱՒ|ԳՆՈՒԹԵԱՄԲՆ ԱՑ. ԵՒ ԵՂ.ԵՆ Ի՚Ն Ջ :Զ: (6) ՈՐԴԻ, Զ|ԲԵՐԴԵՐՍ ԵՒ ԶԳԱՒԱՌ|Ս ԵՏՈՒ ՆՈՑԱ ԵՒ ԵԿ|Ի Ի Վ.ԱՆՔՍ ՄԱՒՏ Ց|ԻՄ ԵՂ.ԲԱՑՐՍ Ի ՏՐ.| ԳՐԻԳՈՐԷՍ ԵՒ ԵՂԷ| ԿՐԱՒՆԱՒՈՐ ԵՒ Բ|ԵՐԻ ԶԽԱՉՔԱՐ|Ս ՑԱԶՈՒԱ, ՇԱՏ| ԱՇԽԱՏՈՒԹԵ|ԱՄԲ ԵՎ. ԲԱ-ԶՈՒՄ ՀՆԱՐԻՒՔ ԿԱՆԴՆԵՑԻ ՍԲ. ՆՇԱՆ ՀՈԴԻՈՑ ԻՄՈՑ: ԱՐԴ՝ Վ.ԱՍՆ ՋԵՐ ՀՈԴԻՈՑԴ, ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՑՔ՝ ԶԻՍ
ՅԱՂ.ԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ. :ՈՂ.Ա: (1182) ԹՈՒԻՍ[1]:

[1] Մաճոր. *Խաչքարի նախնական տեղն անհայտ է, սա 32 տարի առաջ է քանդակվել, քան այն եկեղեցին, որի մեջ նա գտնվում է։ Հետագայում խաչքարը օգտագործվել է եկեղեցու մեջ որպես բեմի սեղան։ Այդ նպատակով նրա կենտրոնում փոս է արվել և ագուցվել վեմ քարի վրա։ Այժմ թե՛ մեկը, թե՛ մյուսն ընկած են նույն եկեղեցու բեմի վրա։*

*Խաչքարի ստորին մասը շեղակի կոտրված է, որի պատճառով անհետացել են արձանագրության վերջին տողերը։ Լրացումները կատարում ենք նախորդ հրատարակիչներից։ Հրատարակիչների մոտ կան* կամաւճ աստուծոյ *բառերը, որոնք բնագրում չէին կարող լինել, որովհետև այդ մասն ամբողջական է։*

*Հրատ. Շահխաթունեանց, II, 361։ Ջալալեանց, I, 205։ Բարխուդարեանց, 203—204։ Տէր-Մովսիսեան, 97ա։*

**708. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,** *հարավային պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, վերին մասում 19 տող.*



ՇՆՈՐՀԻՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ՀԱՒՐ ԵՒ ՄԻԱԾՆԻ ՈՐԴՒՈՅ ՆՈՐԱ ՅԻ. ՔԻ. ԵՒ ՊԱՐԳԵՒԱՒՔ ԱՄԵՆԱՍ|ՈՒՐ|Բ ՀՈԳՒՈ|. ԵՍ ԱՐՋՈՒԽԱԹՈՒՆՍ ՆՈՒԱՍՏ ԱՂԱԽԻՆ ՔԻ. ԴՈՒՍՏՐ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՔՐԴԻՆ ԵՒ ԱՄՈՒ|ՍԻՆ ՎԱԽՏԱՆԿԱ ԹԱԳԱՒՈՐԱԶՆՈ ՏՆ. ՀԱԹԵՐՔՈ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ՎԵՐԻՆ ԽԱՉԵՆՈ ՅՈՒՍՈՎ ՄԵ-ԾԱՒ ՇԻՆԵ|ՑԻ ԶՍԲ. ԿԱԹՈՂԻԿԷՍ Ի ՏԵՂՈՋ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ ԱՌՆ ԻՄՈ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ ՀԱՍԱՆԱ՝ ԱՆԴՐԱՆ|ԻԿԻ|Ս ԻՄՈ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ, ՈՐ Ե|Ի| Ի ՏԷՐՆ ԿԻՍԱՒՐԵԱ. ՎԱԽՃԱՆԵԼՈՑ. ԶԻ ՎԱՍՆ ԻՄ ՄԵՂԱՑ ԽՐԱՏԵԱՑ ԶԻՍ ԱԾ. ԵՒ ԽԲԱՐՁ| Ի ԳԼԽՈ ԻՄՈ ԶԵՐԿՈՍԵԱՆ ՊՍԱԿՍՆ ՎԱՅԵԼՈՒՉ. ԶԻ ԱՆԴՐԱՆԻԿՆ ԻՄ ՀԱՍԱՆ ՍՊԱՆԱՒ Ի ԹՈՒՐՔԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ| ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱ-ՏՈՅՍ ԵՒ ԶԿՆԻ ԵՐԻՑ ԱՄՍՈՑ ԵՒ ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻՆ ԻՄ ԳՐԻԳՈՐ ՏԷՐՆ ԿՈՉԵՑԵԱԼ Զ|ՊԱՐՏ ԲՆՈՒԹԵԱՆՍ ՀԱՏՈՒՑԱՆԵԼՈՎ, ՎՃԱՐԵԱՑ Ի ԿԵՆՑԱՂՍ ԵՒ ՓՈԽԵՑԱՆ ԱՌ ՔՍ. ՍՈՒԳ ԱՆՄԽԻԹԱՐ| ԹՈՂԼՈՎ ԹՇՈՒԱՌԱՑԵԼՈ ՄԱՒՐՍ ԻՒՐԵԱՆՑ. ԱՅԼ ԶԻ Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ԻՒՐԵԱՆՑ ՅՈՅՍ Ի ՄՏԻ ԵԴԵ|ԱԼ ՆՈՑԱ ՇԻՆԵԼ ԵԿԵՂԵՑԻ ՅԱՅՍՄ ՏԵՂՈՋ ԵՒ ՈՉ ԺԱՄԱՆԵՑԻՆ ՎԱՍՆ ԱՐԱԳԱՀԱՍ ԼԻՆԵԼՈ Ի ՎԵՐԱ ՆՈՑ|Ա ՄԱՀՈՒՆ, ԻՆՉ ԱՒԱՆԴԻԵՑԻՆ ԱՆԴԱՐՉԻՒ ԿԱՏԱՐԵԼ ԶՓԱՓԱԳ ՍՐՏԻՑ ՆՈՑԱ. ԵՒ ԻՄ ՅԱՆՁՆ ԱՌԵԱԼ ՄԵԾ| ՅՈՒՍՈՎ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԲ. ՇԻՆԵՑԻ ԶՔԱ-ՒԱՐԱՆՍ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵ. ՈԳՒՈՑ ՆՈՑԱ ԵՒ ԻՄՈ ԵՒ ԴՍՏԵՐԱ|Ց ԻՄՈՑ ԵՒ ԱՄԵ-ՆԱՑՆ ԶԱՐՄԻՑ: ԱՐԴ ԱՂԵՐՍԻՒ ՀԱՅՑԵՄ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍՐԲՈ ԽՈՐԱՆԻՍ ՅԻՇԵԼ ՅԱ|ՂԱՒԹՍ ԶՎԵՐԱԳՐԵԱԼՍՆ Ի ՍՄԱ: ԿԱՏԱՐԵՑԱՒ ՍԲ. ՔԱՒԱՐԱՆՍ Ի ԹՒԱԿԱՆՈՒԹԵ|ԱՆ|Ս ՀԱՅՈՑ :Ո|ԿԳ: (1214), Ի ՓԱՌՍ ԱՅ. ԵՒ Ի ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ՍԲ. ՈՒԽՏԻՍ. ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ ԺԱՌԱՆԿՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԳԵՒՂՍ Ե|Ւ ԱԳԱՐԱԿՍ ԻՒՐԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՒՔՆ, ԶԱՊԱՀԷՆ ԵՒ ԶԵՉՆԱՐԱԾԱՆՑ ԵՒ ԶԲՂ-ՃԱՆՑ ԵՒ ԶԿԱՆԱՉԱՒՈՐՆ ՈՐ Ի ՎԱՅՈ ՋՈՐ|, ԵՒ ԵՐԿՈՒ ՏՈՒՆ ՅԱՐՓԱ, ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԿԱՄԱԿՑՈՒԹԲ. ԵՂԲԱՐՑՍ ԶԱՒԱԳ ԽՈՐԱՆԻ ԶՊԱՏԱՐԱԳՆ ՅԱ-ՆՈՒՆ ՎԵՐԱԳՐԵԼՈՑՍ ԿԱ|ՏԱՐԵԼ ԱՆԽԱՓԱՆ. ԵԹԵ ՈՔ ԱՅՍՄ ՎՃՌԻ ՀԱՍՏԱՏՆՈ ԽԱՓԱՆՈՒՄՆ ԱՌՆԷ՝ ՅԻՇԽԱՆԱՑ ԿԱՄ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՏԵՂՈՅՍ՝ ԿԱՄ Ո ՈՔ ԵՒ Ի|ՑԷ, ԽԱՓԱՆԵՍՑԻ ՅՈՅՍ ՆՈՐԱ ՈՐ ԱՌ ՔՍ. ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏԵՍՑԻ ՅԱՅ:

*Հրատ. Շահխաթունեանց, II, 356—358 (բաժանած երկու մասի)։ Տէր-Մովսիսեան, 87բ—88ա (պակաս 11 և 12 տողերից)։ Բարխուդարեանց, 204—5 և 207։ Ջալալեանց, I, 199։* Լուսանկ. 106

***709. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ****, արևմտյան մուտքի կամար ճակատաքարին, արտաքուստ, 6 տող.*



ԵՍ ՄՍՄԱ., ԴՈՒՍՏՐ| ՎԱՂՏԱՆԿԱ Տ̅Ն. ՀԱԹԵՐՔՈՑ ԵՏՈՒ ԶԻ|Մ ՀԱՑՐԵՆԻ ՊԱՉՈՑ ⌊Ա⌋ԳԱՐԱԿ ԵՒ ՍՊԱՍՔ ԵԿԵՂԵՑՈՑՍ| ՑՈՍԿՈ ԵՒ ՑԱՐԾԱԹՈ Ի Ս̅Բ. ԿԱԹՈՂԻԿԷՍ. ՑԱՌՍՋՆՈՐԴՈՒ|Թ̅Ե. Տ̅Ն. ԳՐԻԳՈՐԻՍԻ. ԵՒ Ս̅Բ̅. ԵՂԲԱՐՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՋՏԱՒՆ Ս̅Բ. ՑԱԿՍԲԱ ԵՒ ՋԿԻՐԱԿԵՆ ՋԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԱՆԽԱՓԱՆ. ։ՈՂ։ (1241) Թ̅Վ⌊Ի̅Ն⌋։

*Ծանոթ. Պաչոգարակ գրախումբը Ջալալյանցը վերծանել է Պաչակամակ. իսկ Տեր-Մովսիսյանը՝ Պաչոյզարակ։ Գրաշարքը նույնությամբ վերծանելու դեպքում ճիշտը կլինի ՊԱՉՈՑԳԱՐԱԿ, բայց մենք համարում ենք, որ գրիչը սխալմամբ միջից բաց է թողել Ա տառը և վերականգնում ենք ՊԱՉՈՑ ԱԳԱՐԱԿ իմաստալից ձևով։*

*Հրատ. Ջալալեանց, II, 227։ Տէր-Մովսիսեան, 95ա։*

Լուսանկ. 110

***710. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ***, *արևմտյան պատի հարավային մասում (մուտքից հարավ), արտաքուստ, 20 տող։*




ԿԱՄԱՒՆ Ա̅Ց. Ե⸢Ս ՄԱ⸣-| ՄՔԱՆ ԴՈՒՍ-⸢ՏՐ . . . . . . . . . . . . . . ՄԻԱԲԱՆԵՑ⸣Ա ԴԱԴԷ⸢ՎԱՆԻՍ ԵՒ ԵՏՈՒ| ԻՄ ՀԱՑՐԵՆԻՔՆ. . .ՈՐ Ի⸣Մ ԵՂ-ԲԱՐՔՆ Ե⸢ՏՈ⸣ՒՆ ԻՆՁ ԵՒ ԵՍ| ԿԱՄԱՒՔ ՏՈՒԻ ⌊Ի̅⌋ ՍԲ. ԿԱԹՈՒՂԻԿԷՍ ։Ա։| ՉՈ-ՐԵՑԱՑՀՈՂ, ։Ի։ (20) ՇԻՆԱԿՆԱՏՈՒՆ, ։Ա։| ՋԱՂԱՑ։ Ս-ԱՆԱԳՍԻՏԻ ԱՐԾԱԹԻ Տ| ՈՒՓ ԵՒ ՏԱՌԱՇՈՐՋԱՌ ՊԱՏՈՒԱ-ԿԱՆ| ՑԱՌԱՋՆՍՐԴՈՒԹ⌊ԵԱ⌋ՆՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՍԻ ՈՐԴ| ԻՈ ՎԱՍԱԿԱ. ԵՒ ՍՈՔԱ ԵՏՈՒՆ ԻՆՁ| ։Գ։ ԱՒՐ ՋԱՄԵ-ՆԱՑՆ ⸢ԵԿԵՂԵՑ⸣ԻՔՍ ՋՆՈՐ| ԿԻՐԱԿԷՆ ԵՒ ՋՀԵՏ . . . . ՐՍՆ. ԿԱՏ|ԱՐԻՉՔ ԳՐՈՑՍ ԱՒՐՀ⸢ՆԵԱԼ⸣ ⸢Ե⸣ՂԻՑԻՆ ՑԱՑ.| ԵՒ ՈՎ ԽԱՓԱՆԷ ՑԱ⸢ԻՏ⸣ԱՐԱՑ ԿԱՄ Ի Ծ|ԱՆԱՒԹԻՑ ՆՋՈՎԵԱԼ ԵՂԻՑԻՆ| ։ՑԺԸ։ ՀԱՑՐԱՊԵՏԱՑՆ. ՄԱՍՆ ԵՒ ԲԱ|ԺԻՆ ԸՆԴ ԿԱՑԵՆԻ ԵՒ ԸՆԴ ՑՈՒԴԱՒ ԵՂԻՑԻ|։ Ա̅Ծ. ՈՂՈՐՄԻ ՍԱՐԳՍԻ։

*Ծանոթ. Առաջին, ինչպես և կենտրոնի տողերը հողմահարված և մեծ մասամբ թափված են։ Վերջին տողը գրված է մեծ և գեղագիր, համարում ենք գրչի ստորագրությունը, որը փորագրել է ներքևի արձանագրությունը։*

*Ժամանակը նույնն է (1224)։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 95ա։*

Լուսանկ. 107

711. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ. նախորդի տակին, 13 տող.*



ԱՆՈՒԱՄԲՆ Ա͞Յ. ԵՍ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ Հ|ԱՍԱՆԱ, ՈՐ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՏՈՒԻ Ի| ԴԱԴԻ ԳԵՐԵԶՄԱՆՍ :Դ: ՏՈՒՆ ՇԻ|ՆԱԿ[ԱՆ] ՎԱՍՆ ՀՈԳՈ ԻՄՈ ՅԱՌԱՋՆՈՐԴ|ՈՒԹ͞Ն. Տ͞Ն. ԳՐԻԳՈՐԻՍԻ. ԵՒ ՍՈՔԱ| ՏՈՒԻՆ ԻՆՁ ՉՏԱՒՆ ՍՐԲՈՑՆ ԳՐ|ԻԳՈՐԻ ՋԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ:| ԱՐԴ ՈՎ ԽԱՓԱՆԻ ՅԱՌԱՋՆՈՐ|ԴԱՑ ՉԻՄ ԺԱՄՆ, ԿԱՄ ՅԱԻԱԳԱ|Ց ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՑ ՉՇ|ԻՆԱԿԱՆ ՅԵՏ ԱՌՆԼՈՎ, ԻՄ ՄԵՂ|ԱՑՍ ՊԱՐՏԱԿԱՆ Լ. ԵՒ ՄԱՍՆ ՆՈՐԱ| ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ ԵՂԻՑԻ :ՈՀԳ: (1224):

*Հրատ. Ջալալեանց, II, 227։ Տէր-Մովսիսեան, 95ա։*

Լուսանկ. 108

712. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ. նախորդի տակին կիսաեղծ. 10 տող.*



[ԿԱՄՕԻՆ] Ա͞Յ. ԵՍ ՀԱՍԱՆ, ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԱ| . . . ՈՒՏՆ ԻԻՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ| . . . . ՀԱՒՐ ՀՈԳՈՅՆ ԵՒ ԲՆԱԿԻՉՔ| . . . ԵԿ[Ե]ՂԵՑԻ ՊԱՏԱՐԱԳ ԻՄ ՀԱՒՐՆ| . . . . . . Ս͞Բ. ԳՐԻԳՈՐԻՆ| . . . . . :Բ: ՍԱՀՄԱՆ| . . . . . . . . . ԻՄ ՀԱՒՐ ՀՈԳ| . . . . . . . . . ԱՅՍ . . ՉՈՒՆԻ| . . . . Ա͞Յ. ԵՒ ՑՇՎ. . . . Գ:

*Ծանոթ. Սկզբի մասերը հողմահարված, թափված են։*

*Գրված է նախորդների գրչի ձեռքով և նույն ընտանիքի անդամներն են հիշատակված։ Վերջին տողում էլ մնացել է թվականի Գ տառը, որով և համարում ենք նույն՝ :ՈՀԳ: 1224 թվի։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 95։*

Լուսանկ. 109

713. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, *արևմտյան մուտքից վեր, հարավային անկյունում, արտաքուստ, վարդակի շուրջը, 5 տող.*



ԱԾ ՈՂՈՐՄԻ| ԽՈՐԻՇԱՀ|Ի ՀՈԳ|ՈՑՆ.

Մաճոր. *Անձնանունը և գրչությունը նման է նախորդներին,* XIII *դար*

Լուսանկ. 111

*714. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, արևմտյան պատի կենտրոնական կամարի վերին մասում, արտաքուստ 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ՍԵԻԱԴԱ ԻՇԽԱՆ, ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԹԱՃԵՐՆ ՏՈՒԱՔ Ի ՀԱՑՐԵՆԵԱՑ| ՄԵ]ՐՈՑ Ի ԴԱԴԻ ՎԱՆՍ ԶԿԱՐՄՆՋԱՏԱՓԱ ԱՅԳԵՆՆ, Ի ԽՈՋԵՆԵԿՈՒՑ Ի ՆՇԽԱՐԱՏՈՒՆՆ ՄԵԾ ՑՈՒՍ|ՈՎ. ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵԶ :Բ: ԺԱՄ ԶԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ՝ ԶՏԱՒՆ ՏԵԱՌՆ ԸՆԴԱՌԱՋՆ ԻՆՁ| [Զ]ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ ԱՒՐՆ ԹԱՃԵՐԻՆ։ ՈՎ ԶԱՑՆ ԱՅԳԵՆՆ ՑԱՑՍ ՎԱՆԱՑՍ ՀԱՆԷ Ի ՓԱՍԱՑ ՈՐԴՈՑՆ ՈՐ|ՈՇԵԼ ԵՂԻՑԻ :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑԸՆ ԱՆԻԾԱԾ Է ԵՒ ՅՈՒԴԱՒ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ. ԱՄԵՆ. ԹԻՒՆ :ՈՂ: (1241)։

*Հրատ. Ջալալեանց, II, 225—223, Տէր-Մովսիսեան, 95բ։*

Լուսանկ. 112

*715. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, նախորդից ներքև, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ՎԱՂՏԱՆԳ ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱ, ԾԱՌԱ ՑԻ. ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՆԱՆԱ ԱՂԱԽԻՆ ՔԻ. ՄԻԱԲԱՆԵՑԱՔ| ԴԱԴԷ ՎԱՆԱՑՆ, ԵՒ ՏՈՒԱՔ Ի ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՐՈՑ ԶՇԵՋԱՁՈՐԵՑՆ ԵՒ ԱՅԳԻ ՄԻ Ի ԽՈՋԵՆԵԿՍ Ի . . . . ԿՆԱՄԱՐԳ։| ԵՒ ՄԵԾԱԾԱԽ ՄԱՍԱՄԲ ԽԱՉ ՄԻ ՄԵԾԱՒ ՅՈՒՍՈՎ. ԵՒ ԲՆԱԿԻՉՔՍ ՏՐ ԳՐԻԳՈ-

ՐԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ ՄԵԶ :Բ: ԱՒՐ ԺԱՄ ԶԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԶՏԱ|ԻՆ ՅՈՎԱՆՆՈՒ ՆԱՆԱԻՆ ԵՒ ԶՏԱԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՎԱՂՏԱ|ՆԳԱ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԶԺԱՄՆ ԿԱՄ ԽԼԷ ԶՄԵՐ ՏՈՒԱԾՍ ՄԵՐ ԵՒ ՄԵՐ ԱԶԳԻ ՍԵՂԱՑ ՏԷՐ Է. Ի ԹՈՒ|ԻՆ| :ՈՂ: (1241) ԼՐ:

Հրատ. Շահխաթունեանց, II, 161 (վերջում աղավաղված և առանց թվականի)։ Ջալալեանց, I, 204։ Տէր-Մովսիսեան, 94։

Լուսանկ. 113

*716. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, նախորդից ներքև, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԳՈՆՑԷՍ ՍԻ ՈՐԴԻՔՍ՝ ՀԱՍԱՆ ՈՒ ՎԱՐՀԱՄ, ԹՈՌՆ ԴԱԻ-ՓԱՆՑ, ՏՎԱՔ| Ի ԴԱԴԻ ՎԱՆՍ ԶՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԶԽՈՒԴ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ, ԽԱՍՈՎՆ, ՎԵՐԻՆ ՄՍՐԴ|ՈՎ. ՎԱՍՆ ՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՍԻՆՆ ՄԵՐ ԹԱԹՈՒՆԻՆ, ԴՍՏԵՐՆ ՔՐԴԻՆ ԱՆԲԵՐԴԵՑԻ՝ ԱՄՈՒՍՆՈ| ՀԱՍԱՆՍ. ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱ-ՆԵՑԻՆ :Ը: ԱՒՐԵՑՆ :Ը: ՊԱՏԱՐԱԳ ԱՆԽԱՓԱՆ ՎԱՍՆ Լ|ՈՒՆԻՆ. ԱՐԴ ՈՎ ԶԽՈՒԴԻ ԴԱԴԻ ՎԱՆԱՑ ՀԱՆԷ ԿԱՄ ԶԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ :ՅԺԸ: ՀԱՅՐ|ԱՊԵՏԱՑ ՆԶՈՎԱԾ Է|:

Ծանոթ. *Գրված է փակագրերով, անարվեստ և վերջից՝ թերի։*

*Չի հասկացվում վերջին տողի սկզբի Լանին բառը, հավանաբար պետք է լինի Թաթունին։ Նշված պատճառներով հրատարակիչները միայն սկզբի երկու տողն են վերծանել, այն էլ սխալներով։*

*Ժամանակը կարելի է որոշել Քուրդ Անբերդեցու հիշատակությամբ, որը XIV դարի սկզբի արձանագրություններում է հիշատակված (1317, 1329, 1338)։*

Հրատ. Ջալալեանց, II, 226։ Տէր-Մովսիսեան, 94բ։

Լուսանկ. 114

*717. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, նախորդից ներքև, 5 տող.*



[illegible]ԱՆ. ԱՑ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ՏՆՏԵՍ ՀՐԱՄԱՆԱՒ ՏՆ. ԱԹԱՆԱՍԻ ԵՒ ԿԱՄԱԿՑՈՒ-ԹԵ˛ԱՄ˛Բ Ա.ՑԼ ԵՂ.ԲԱՐՑՍ ԳՆԵՑԻ ԻՄ ԸՆՁԻՒՔ ՋԱԽՈՌԱԿԱԼՆ ԵՒ ԵՏՈՒ ՑԵԿԵ-Ղ.ԵՑԻՍ ԵՒ ԽԱՌՆԵՑԱ ԸՆԴ ԵՂ.|ԲԱՑՐՈՒԹԻ. ՍՈՑԱ ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՋ Ի ՏԱՒՆԻ ԵՐԵՒՄԱՆ Ս˛Ր˛ԲՈ ԽԱՉԻՆ :Գ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ. ԱՐ|Դ ԵԹԵ ՈՔ Զ՛Ա՛ՑՆ ՀԻՂ.Ն ՑՍՑՍ ԵԿԵՂ.ԵՑՈՑՍ ՀԱՆԷ ԿԱՄ ՋԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ՝ ԽԱՓԱՆԵՍՑԻ ՑՈՑ˛Ս ՆՈՐԱ ԱՌ ՔՍ. ՙԵՒ՚ ՄԱՍ ՆՈՐԱՑ ԸՆԴ ՈՒԴԷԻ ՈՒ ԸՆԴ Ա.ՑԼ ԽԱՉԱՀԱ˛Ն˛ՍՆ ԵՂ˛ԻՑԻ˛։

Ծանոթ. *Աթանաս վանահայրը հիշատակված է թվական ունեցող այլ արձանագրություն-ներում՝ :Ձժ:, :ՁԺԴ:, :ՁԼԲ: թվականներին։*

*Հրատ. Ջալալեանց, II, 226—227* (Ջախոռակալի փոխարեն Ջախկալն)։
*Տէր-Մովսիսեան, 94բ։*

Լուսանկ. 115

*718.* ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,*** *արևելյան պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, 4 տող.*



ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՑ. ԵՍ ՏՐ. ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԱՐԱ|ԲԵՐԴՈՅ ՄԻԱ-ԱՆԵՑԱ ԴԱԴԻ ՎԱՆԱՑՍ, ՄԻՆ ԱՑԳԻ ˛ԵՏՈՒ˛ ՀԻՒՐԱՏԱՆ.Ն.| ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՋ Ի ՏԱՒՆԻ ՏՆ. ԲԱՐՍՂԻ :Բ: ԱՒ|Ր ՊԱՏԱ-ՐԱԳ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵՂ.ԱՑՍ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՑ. Թ˛ՎԻՆ˛ :ՁԲ: (1253)։

*Հրատ. Ջալալեանց, II, 226։ Տէր Մովսիսեան, 95բ։*

*719.* ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,*** *արևելյան պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, նախորդից հյուսիս, 3 տող.*



ԵՍ ՑՈՎԱՆԷՍ ԵՐԷՑ ԿՈԴՐԵՑԻ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ ՄԻԱԲԱ|ՆԵՑԱ ՄԲ. ՈՒԽՏԻՍ ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ˛ԻՆ˛Ջ Ի ՑԱՑՏՆՈՒԹԵ. ՃՐԱԳԱԼՈՒ|ՑԻՆ :Ա: ՊԱՏԱՐԱԳ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵ՛ՂԱՑՍ ՏԷՐ ˛Է˛ ԱՌԱՋԻ ՔԻ. :ՁԸ: (1259)։

Ծանոթ. *Տեղանունը և թվականը սխալ է հրատարակիչների մոտ, Ջալալեանց՝* Կոտա-րուց *և :Չ:(1251)։ Տէր-Մովսիսեան,* Կոտուց *և :Չ. : (1271)։*

*Հրատ. Ջալալեանց, II, 226։ Տէր-Մովսիսեան, 95բ։*

*720.* ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,*** *հարավային պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ, 5 տող.*



ՐԿԱ˺ՄԱԻՆ Ա̅Ց. ԵՍ ՍԱՍՆԱ ՁԵՌՆԱԻՈՐ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ. ՈՒԽՏԻՍ| ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ ՏՐ. ԱԹԱՆՍՍԻ, ԵՏՈՒ ՁՍԱՐՈՒՏԱՆՑ ՀՈՂՆ, :Դ:| ԵՋՆ ԵՒ ԱՑԼ ԱՐԴԻՒՆՔ Ի Ս̅Բ. ԿԱԹՈԿԻԿԷՍ. ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՋ| :Բ: ԱԻՐ ԺԱՄ ՋԱՄ ԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ˛Ի˛ ՏԱԻՆ ՍԱՀԱԿԱ ԵՒ ԿԻՐԱԿԷՆ: ՈՎ. Զ|ՀՈՂՆ ԽԼԷ ԿԱՄ ԶԻՄ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵ՟ՂԱՑ ՊԱՐՏԱԿԱՆ Է. :ՉԺ: (1261):

Ծանոթ. Հետագայում առաջին տողի սկզբից խաչ է քանդակված, որի հետևանքով երկու տառ ոչնչացել է։

Հրատ. Ջալալեանց, II, 227։ Տէր-Մովսիսեան, 94բ։

721. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի վրա, ներքուստ, ծեփի վրա կարմիր ներկով, կիսաեղծ, 7 տող.



ՉԺԲ: (1263), ՅԱՆՈՒՆ Ա̅Յ. ԵՍ ՆԵՐՍԷՀ . . . . . ՄԻԱՅԲԱՆԵՑԱ Ս̅Բ. ՈՒԽՏԻ˺Ս ՏՐ ԱԹԱՆ˺ԱՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱ˺ՍՏԱՏԵՑԻՆ˺ . . . ԶՏԱԻՆ ՍԲ. ՔԱՀԱՆ . . ՑԱՆ :Դ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՅՈՎԱՆԻՍԻ Ց . . . . ԵՍ.Ց ԻՄՈՑ ԻՆՋ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՑ.

723. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի միջին մասում, արտաքուստ, 7 տող.



ՔՍ. Ա̅Ծ. ՈՂՈՐՄԻ ՍԱՐ|ԿԱՒԱԳ˛ԻՆ˛, ՈՐ ԵՏ ԸՆԾԱ ԵԿ|ԵՂԵՑՈՅՍ. ՏՐ. Ս˛ԱՐ˛ԳԻՍ ԵՒ ՄԻԱ|ԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ :Բ: ՊԱՏԱՐ|ԱԳ Ի ՏԱՐՈՒՄ, Ի ՏԱԻՆԻ Ս̅Բ. ԹԷ|ՈԴՈՐՈՍԻ. ԿԱՏԱՐ˺ԻՉՔ ԱԻՐՀՆԻՆ˺ ՅԱՑ. :ՉԾԸ: (1309)

Հրատ. Տէր-Մովսիսեան, 94բ (թվական չունի)։

Լուսանկ. 117

*722. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, ներքուստ, հյուսիսարևելյան ավանդատան գլխին, ծեփի վրա կարմիր ներկով, 11 տող.*



ԿԱՄԱՒՆ ՌՑ. ԵՍ ՍՄՊԱՏ ԻՇԽԱՆ, |ՈՐԴԻ ՄԵԾԻՆ ԼԻՊԱՐՏԻ, ՄԻԱԲԱՆԵՑ|Ա ՍԲ ՈՒԽՏԻՍ ԴԱԴՈՒ ՎԱՆԱՑ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ. ՏՐ. ԱԹԱՆԱՍ|ԻՆ ԵՒ ԳՆԵՑԻ ԶԽՈՒՆՏԱՇԱՆՑ ԱՑԳԻՆ ԵՒ ՑԵՂԵԳԻՍ ԶԻՄ ԳՆԱԾ| ԶԻԹԱՀԱՆՔՆ ԵՒ ԱՑԼ ԱՐ-ԴԻՒՆՔ ԸՍՏ ԿԱՐԻ ԵՒ ԶԿԱՆԱՆՋԱԻՈՐ| ՙԳ՚ԵՂՆ ԱՑԼՆ. ՈՐ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԱՄԷՆ ԽԱՐՋՈՎՆ ԱՆՋԱՐ ԵՒ ԵՏ|ՈՒ ՈԲ. ԿԱԹՈՂԻԿԷՍ. ՏՐ. ԱԹԱՆԱՍ ԵՒ ԱՑԼ ՄԻԱ-ԲԱՆ|ՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՍԵՋ ԶԱՏԿԻՆ ՑԱՐՈՒԹԵԱՆ| ԿԻՐԱԿԻ ԱՒՐՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ԱՐԳ ՈՎ ԽԼ|Է ԶՄԵՐ ՏՈՒԱԾՆ ԿԱՄ ԶԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ :ՑԺՐ: ՀԱՑՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԱԾ ԵՂԻՑԻ. ԹՒՈՆ :ՁԺԴ: (1265):

*Հրատ. Շահխաթունեանց, II, 361. Բարխուդարեանց, 205. Տէր-Մովսիսեան, 96ա.. Ջալալեանց, I, 204.*
Լուսանկ. 116

*724. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, ներքուստ, բեմի գոգավորության վրա, պատուհանից հարավ, ծեփի վրա կարմիր ներկով, 9 տող.*



ԱՒԳՆՈՒԹԲ. ԱՑ. ԵՍ ՄԱՄ-ՔԱՆ, ԱՄՈՒՍԻՆ ԱՐԻԱԿԱՆ|ԻՆ ՀԱՍԱՆԱ ԵՒ ՈՐԴԻ ՄԵՐ ԳՐ˻Ի˼Գ˻Ո˼Ր ՏԷՐՔ ԳՈՂՈՎ ՏԵՂՈՑՍ Հ|ԱՑՐԵՆԱՒՔ ԵՒ ՄԵՐ ՊԱՐՈՆԷՔՆ ՀԱՍՏԱՏԵ-ՑԻՆ Ի :ՁԾՁ: (1307) ԹՎԻՆ|, ՏՎԱՔ Ի ՍԲ ՈՒԽՏԻՍ ԶԾՈ-ՎԱՏԵՂ, ԶՋԱՋՈՒՌԱՆՑ, ԶՐ-ՋՈԼԲԷԿ|ԱՆՑ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ՏՎԻ ԶՁՌԱԳՈՒՆԱՆՑ ՀՈՂԵՐՆ ԶՄԵՐ ԲԱԺԻՆ ԻՒՐ| ԶՈՐԵ-

ՑՈՎՆ, ՈՐԴ[Լ]Ի[Յ] ԻՄ ՏՐ. Ս[Լ]ԱՐ[Յ]Գ[Լ]ԻՍ[Յ] ԵՒ ՄԻԱԲԱՆՔ[Լ]Ս[Յ] ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՍԲ. ԸՍՏ|Ե-ՓԱՆՈՍԻ ՏԱԻՆԻՆ ԺԱՄՆ, ՈՐ ԼԻՆԻ ԻՄ ՄԱԻՐՆ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՄ ԱՍՓ|ԻՆ: ԹԷ ՈՔ ՁԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ ԿԱՄ ՁԸՆԾԱՆ ԵՏ ՈՒՆԷ ԴԱՏԻ ՅԱՑ...| ՄՈԽՐԱԲԱՔՍ ՄԵՐ ԲԱԺԻՆ ՏՎԱՔ Թ[Լ]Ի[Լ]Ն[Յ] :ՉԿԱ: (1312):

*Հրատ. Շահխաթունեանց, II, 360։ Բարխուդարեանց, 205։ Տէր-Մովսիսեան, 95բ—96ա։ Ջալալեանց, I, 203—4։*

Լուսանկ. 117ա

**725.** ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,*** *արտաքուստ, արևմտյան պատի վրա, կամար կազմող կիսասյան վրա, վերից վար, մանր և գեղեցիկ գրերով, կիսաեղծ 23 տող.*

. . . . . .
. . . . . .
ՋԵՀՈ . .
ՅԱՅՍ . .
ԼԹՂԿՈ . .
ՄՍՔՄՊՄ
ՄՓԻՍԲ
ՈՄՍՆԱԿ
ԻՑԵՂԻՑԻ
ՏՐ ԾՌԵՏ
ՎՄ ԻՒՐՀՈԳ
ՈՅՓՐԿՈՒ
ԹԵՋՇՀԱ
ԱՌԴԻ
ՔՆԻՒՐՀԱՅՐ
ԵՆԱՔՆՅԻՒ
ՐՀԱԼԱԼԸՆ
ՁԻՒՆ . . .
ՈՒՋԻՇԱՏԱ
ԿԵՈՎԽՓԱՆԷ
ԴԱՏԻՅԱՅ
ԹՎ: Չ
ՂԹ:

. . . . . ՔՍ. ՊԱՏԱՐԱԳ ՍՐԲՈՄԱՍՆԱԿԻՑ ԵԴԻՑԻ. ՏՐ. Ս[Լ]Ա[Յ]ՐԳ[Լ]ԻՍ[Յ], ՈՐ ԵՏ ՎԱՍՆ ԻԻՐ ՀՈԳՈՑ ՓՐԿՈՒԹԵ . . . . ՈՐԴԻՔՆ ԻԻՐ ՀԱՅՐԵՆԱԻՔՆ ՑԻԻՐ ՀԱԼԱԼ ԸՆՁԻԻՆ . . . ՈՒ ՁԻՇԱՏԱԿԵ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՑ. ԹՎ[Լ]ԻՆ[Յ] :ՉՂԹ: (1340):

Ծանոթ. *Սկզբի տողերն անվերծանելի են։*

**726.** ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,*** *արտաքուստ, արևմտյան պատի վրա, նախորդի տակին 6 տող.*

ԻՏԱՐՈՒ
ՄՆ:Ա:ԺԱ
ՄԱՒԱԳՆ
ԿԱՏԱԻ
ՋՐԱՀԵՑ
ԱԾ ՉՂԸ:

Ի ՏԱՐՈՒ|ՄՆ :Ա: ԺԱ|Մ ԱԻԱԳԻՆ| ԿԱՏԱԻ| ՋՐԱՀԵՑ|. ԱԾ. :ՉՂԸ: (1349):

**727.** ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ,*** *արտաքուստ, արևմտյան պատի վրա, նախորդի տակին 5 տող.*

ՁՄԽԻԹԱ
ԱՆՑԷՔՆ
ԹՈՂՈՒ
ԱԻԱԳՀՆԳՇԲ
ՆԱԺԱՄ
. . . . . .
. . . . . .

ՁՄԽԻԹԱՐ| ԱՆՑԷՔՆ| ԹՈՂՈՒ| ԱԻԱԳ Հ[Լ]ԻՆ[Յ]ԳՇ[Լ]ԱԲԱ[Յ]Թ|[Լ]Ն[Յ] :Ա: ԺԱՄ:

728. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, արտաքուստ, արևմտյան պատի հարավային խորշի գոգ մակերեսին, մանր և գեղատառ, եղծված 21 տող.

ԿԱ . . . . . . .
ԵՐԴ . . . . . . .
ՄՅՈ . . . . . . .
ԻԿ . . . . . . .
ՍՐ . . . . . . .
ՄԻ . . . . . . .
ՐՅ . . . . . . .
ՈՒ . . . . . . .
ՆԱՄՅՈՒՔԻ . . . .
ԵՆԵՑՄԵՐՁ . . . .
ՆՑՀՈՂՆՈՒ . . . .
ԻՆԿԱՀԿԱՐ-ՈՒՐՍ . .
ՀՄԱՆԵՑԻՆ.ՄԵՋԱ
ԱԻՐԴԱՐՄՍԳԱՄ . .
ԵՆԷԿԵՂԵՑԻՔՋ . . .
ՍԱՐԳՍԻԿԻ . . . .
ԵՐՆՄԴՈՎՉ . . .
ՀՈՂԿԱՄՋ . . .
ԽԱՓԱՆԵՆ . . .
ԱԾ . . . . .
ԷԻԱՌԱՑ . . . .

Ծանոթ. Հասկացվում է միայն, որ վանքին է նվիրվել հողամաս, թերևս Կաշկառուտ կոչվող վայրում, որի դիմաց արվել է մեկ պատարագ բոլոր եկեղեցիներում։ Ժամանակը, հավանաբար, նույնն է, ինչ նախորդներինը՝ XIV դարի առաջին կես։

729. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, նախորդից անմիջապես ներքև, 11 տող.

ԿԱՄԱՒՆԱ . . .
ՀԱՆՄԱԲԱ . . .
ՍԲՈՒ . . . . .
ՆՈՐԴՈՒԹ . . . .
ՆԱԱՍՈՒ . . . .
ՁԲՊԱՐ . . . .
ԱՆԻՆԻՄ Հ . .
ԱՌԱՐԻՆ . . .
ԱՅ ՈՎՋԺ . . .
ՆԷՆԱՅԱՆ . . .
. . ՊԱՐՏԱԿԱՆԷ

ԿԱՄԱՒՆ Ա[Ծ]Ց ԵՍ ՑՈ[ՒՀ]ԱՆ ՄԻԱԲԱ[ՆԱ]ՆԵՑԱ[Յ] ՍԲ ՈՒ[ԽՏ]ԻՍ ԱՌԱՋ[Ի]ՆՈՐԴՈՒԹ[ԵԱՄԲ] ԱԹԱ[Ն]ՆԱՍՈՒ [ԵՒ] ԽՈՍՏԱՑԱՆԻՆ[Ն] Զ:Բ: ՊԱՏ[ԱՐ]ԱԳ Ի Տ[Է]ԱՒՆԻՆ ԻՄ . . . . Փ ԱՌԱՒՈՐԻՆ . . . ԱՅ ՈՎ ԶԺ[Ն]ԱՄՆԽԱՓԱ[Յ] ՆԷՆԱՅԱՆ [Ի]Մ ՄԵՂ[Ա]ՑՍ ԱՌ Ա[ՍՏՈՒԱԾ] ՊԱՐՏԱԿԱՆ Է

Ծանոթ. Խիստ քայքայված է, հասկացվում է, որ նվիրատվական է։ Աթանասը, որը XIII դարի երկրորդ կեսի գործիչ էր։

730. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի միջին մասում, արտաքուստ, խաչի կողքին, 7 տող.

| | | |
|---|---|---|
| ԱԾ<br>ՈՂՄ<br>ԻՏՐ<br>ԵՂԷ<br>ԻՆՀ<br>ՈԳՈ<br>ՅՆՋԺ | ✝ | ԱԾ. ՈՂ[Ո]Ր[Ե]ՄԻ ՏՐ. ԵՂԷԻՆ ՀՈԳՈՅՆ. :ՋԺ: (1461): |

Հրատ. Տէր-Մովսիսեան, 94բ (առանց թվականի)։

731. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հարավային պատի միջին մասում, արտաքուստ, 5 տող.

ԱԾ ՈՂ
ՐՄԻԿԻՐ
ԱԿՈՍԻՆ
ԱՄՈՒՍՆ
ԻՆԻՐ ԹՎՋԻԸ

ԱԾ. ՈՂ[Ո]ՐՄԻ ԿԻՐ[Ի]ԱԿՈՍԻՆ[Ի], ԱՄՈՒՍՆ[Ո]ՅՆ ԻՐ. ԹՎ[Ի]ՆՋ :ՋԻԸ: (1479):

**732. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, 4 տող.*



ԿԱՄԱՒՆ ՍՑ. ԵՍ ՍԵՐՈԲ ՋՐՎՇ|ՏԿԵՑԻ
ՄԻԱԲԱՆԵՑԱ. ՍԲ. ԽԱՉԻ ⌊ՈՒԹ⌋ԱԻՐԱ|ՑՔՆ
ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ.
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՐՆԻՆ ՑԱՑ.:

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 94բ։*

**733. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *արտաքուստ, հարավային պատի արևելյան մասում, կիսատեղծ 5 տող.*



ԱՑՍ Է ՑՈ|
․ ․ ․ ՄԱՀԻՆ ԹԻ|
ՎՆ ։ՌՃՁԶ։ (1737) Էր
ԵՍ ԱՆԱՐԺԱՆ
ԱՍԼԻՍ ԳՐԵՑԻ։

Ծանոթ. *Վերջին անունը կասկածելի։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 94բ (անունները և թվականը տարբեր)։*

**734. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *արտաքուստ, արևելյան պատի հյուսիսային մասում, խաչի կողքին, 3 տող.*



ԽՈՆԴՔԱՐ ՓԱՇԷՍ, ԴՈՒՍՏՐ|
Գ⌊Ա⌋Ր⌊ՈՆ⌋ ԱԳՊՈՒՂԻՆ, ԵԴՈՒ
ԿԱԶՄԵԼ| ՍԲ. ՆՇԱՆԵՐՍ, ԱԳ⌈ԱԻ-
ԹՍ ՅԻՇԵՑԷ⌋Ք։

Ծանոթ. *Ենթադրում ենք, որ Աղբուղան Դոփյան Հասանի որդին է, հետևաբար, արձանագրությունը վերաբերում է XIV դարի երկրորդ կեսին։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 95բ։*

**735. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *արտաքուստ, արևելյան պատի հյուսիսային մասում, նախորդի տակ, մանրատառ 1 տող.*



ԹՎ ։ՌԾԴ։ (1605), ԹՈՒԴԱՆ ՈՐ
ՓԱՐԵԲԵՐ։

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 95բ։*

**736. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *արտաքուստ, արևելյան պատի կենտրոնական մասում երկու փակագիր.*



ԹՈՄԱ ՎԱՐՊԵՏ։

Ծանոթ. *Հավանաբար XVII դարի։*

**737. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *արտաքուստ, արևմտյան մուտքից վեր, հյուսիսային անկյունում ագուցված կապտավուն նոր խաչքարի կողքին, 3 տող.*



ԶԱԽՈՏՍ ՎԱՐԴ[Ա]ՆԻ ՈՐԴԻ| ԳՐԻԳ[Ո]Ր ԿԱԶՄԵՑ. ՄԲ. ՆՇ|ԱՆԻՍ Ց[Ի]ՇԵԼ ԱԳ[Ա]Զ[Ե]Մ Ի ՔՍ.:

Ծանոթ. *Խաչքարի քանդակների և գրչության ոճով XVII դարի գործ է։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 95ա (սխալվում է, համարելով մուտքի քանդակների վարպետ)։*

Լուսանկ. 117բ.

**738. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *արտաքուստ, արևմտյան մուտքից վեր, հարավային անկյունում ագուցված կապտավուն քարից նոր խաչքարի տակ, 3 տող.*



ՆԿ[Ա]ՐՕՂ ՄԲ. |ՆՇԱՆԱՑՍ| ԶՊՕՂ[Ո]Ս Ց[Ի]Շ[Ե]ՑԷ[Ք]:

Ծանոթ. *Նույնպես XVII դարի գործ է. հավանաբար այս երկու վարպետներն են նորոգել շենքը։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 95ա։*

Լուսանկ. 118.

**739. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽՄԲԻ ԳԱՎԹԻ** *հարավային պատին, արտաքուստ, 8 տող.*



Թ[Վ]Ի[Ն] :ՈՀԳ: (1224)|. ԵՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՌԱՋ|ՆՈՐԴ ՄԲ. ՈՒԽ[Տ]ԻՍ, ՈՐԴԻ| ՆԱՀԱՏԱԿԻՆ ՎԱՍ|ԱԿԱՑ ՇԻՆԵՑԻ Զ|ԺԱՄԱՏՈՒՆՍ ՅԻ|ՇԱՏԱԿ ՀՈԳՈՑ| ԻՄՈՑ. ՅԱՂ[Ա]ԻԹՍ ՅԻՇԷՔ:

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 96ա (տեղագրությունը սխալ)։*

Լուսանկ. 119

**740. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽՄԲԻ ԳԱՎԹԻ** *ներսում, դեպի եկեղեցին՝ տանող արևմտյան մուտքի հյուսիսային կողմում ագուցված խաչքարի տակ, 7 տող.*



ԵՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐԻՍ, ՈՐԴԻ ՆԱ|ՀԱՏԱԿԻՆ ՎԱՍԱԿԱՅ, Ա|ՌԱՋՆՈՐԴ ՄԲ. ՈՒԽՏԻՍ Դ|ԱԴՈՒԻ ՎԱՆԱՑ ԿԱ[Ն]ԳՆԵՑ|Ի ԶԽԱՉՍ ՄԱՀԱՆԻՆ. ՈՐՔ| ԸՆԹԵՌՆՈՑՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻ|ՇԵՑԷՔ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 96բ։*

Լուսանկ. 120.

***741. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽՄԲԻ ԳԱՎԹԻ** ներսում, դեպի եկեղեցին տանող սրբամրայան մուտքի հարավային կողմում ագուցված խաչքարի վրա, 9 տող.*



ԹՎԻՆ :ՈԽԸ: (1199). |ԵՍ ՑՈՒԼԱ|ՆԵՍ . . |ԱԾ ՈՐԴԻ ԿԱ|ՆԳՆԵՑԻ |ՋԽԱՉՍ Փ|ՐԿՈԼԻ-|Թ|Ն ՀՈԳՈՑ ԻՄՈՑ ՑԱՂՈՒԹ|Ս ՅԻՇԵՑԷՔ:

Ծանոթ. *Այս խաչքարը դրվել է պատի մեջ, ժամատան շինությունից 25 տարի առաջ, նախնական տեղն անհայտ է։*

***742. ՀԱՐԱՎԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԻ,** արևմտյան պատին ագուցված խաչքարի տակ, արտաքուստ 5 տող.*



ԹՎԻՆ :ՈԼ: (1181) ԵՍ ԳՐԻԳՈՐ ՔՈՒԵՐՈՐԴԻ ԿԱ|ՆԳՆԵՑԻ ՋԽԱՉՍ ԵՂԲԱԻՐ ԻՄՈ ԳԻՈ|ՐԳԱ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ:

***743. ՀԱՐԱՎԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԻ,** արևմտյան պատին ագուցված մի փոքր խաչքարի վրա, արտաքուստ 3 տող.*



ԱԾ. ՈՂ|ՈՐՄԻ ԽՈՑԱ|ԴԵՂԱ:

***744. ՀԱՐԱՎԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԻ,** արևմտյան պատին արտաքուստ ագուցված խաչքարի վրա 3 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄ|Ի ՇԱՏԲԱ|ՐՈՑ. ԱՄԷՆ:

*745.* ***ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ,*** *արևմտյան պատին արտաքուստ ագուցված խաչքարի վրա 5 տող.*

ԷԿԱԳ | ՆԵՅԱ
ՍԲԽԱ | ՀՍԲՄ
ԷԽ — ԱՍ
ՅՈ | Հ
Ա Ն | Ի ՍԻ

[Է] ԿԱ,Ն,ԳՆԵՑԱ,Ի,| Մ̅Բ. ԽԱՉՍ ԲԱՐ|ԷԽԱԻՍ| ՑՈՀ|Ա-
ՆԻՍԻ:

*746.* ***ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ,*** *արևմտյան պատին արտաքուստ ագուցված փոքր խաչքարի վրա 5 տող.*

ԿՆԳՆ
ԵՅԱԻ
Մ̅ԲԽԱՀ
ՍՇՐ
ԱՆԱ

ԿԱՆԳՆ|ԵՑԱԻ| Մ̅Բ. ԽԱՉ|Ս ՇՐ|Ա.ՆԱ:

*747.* ***ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ,*** *արևմտյան պատին արտաքուստ ագուցված փոքր խաչքարի վրա 3 տող.*

ՍԱԳԻՍ
Ա Է ԽԱ
ՉՍ

ՍԱՐԳԻՍ|Ա Է ԽԱ|ՉՍ:

*748.* ***ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ,*** *արևմտյան պատին արտաքուստ ագուցված խաչքարի վրա 6 տող.*

ԱԾ
ՈՂ
Ր
ՄԻՎ
ԱՐՀ
ՄԱ

ԱԾ| ՈՂ|ՈՐ|ՄԻ Վ|ԱՐՀ|ԱՄԱ:

*749.* ***ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԱՆ*** *կամ տաճարի արևելյան պատին, արտաքուստ, մուտքի մոտ 6 տող.*

ԹՌԿԵՍԳՐԻԳՐ
ԷՍՐԴԻՀԱ ՍԱՆ
ԱՇԻՆԵՑԻՋՏԱԾ
ԱՐՍ ՅԻՇԱՏԱԿ
ՀՈԳՈԻՄՈՅԱՂ
ԱԻԹՍՅԻՇԵՑԷՔ

Թ̅,Վ,Ի,Ն, :ՈԿ: (1211). ԵՍ ԳԻՐԳՈՐ|ԷՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱ-
Ն|Ա ՇԻՆԵՑԻ ՋՏԱԾ|ԱՐՍ ՅԻՇԱՏԱԿ| ՀՈԳՈ ԻՄՈ
ՑԱՂ|ԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

*Հրատ. Տէր-Մովսիսեան, Յօտ*
Լուսաճկ. 121.

**750. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, հայկական ամենաբարձր արվեստի ինքնուրույն մի նմուշ, կանգնած է իր նախնական դիրքում, զանգակատան մեջ. քիվին և շրջանակներին ծաղկագիր և ուռուցիկ տառերով 4 տող.*



ԶՏՐ. ԱԹԱՆԱՍ ՑԻՇԵՍՋԻՔ Ի ՔՍ.| ԷԻՆ ԱՑ. ՉԱԻՐՈՒԹԲՆ. ԵՍ ՏՐ. ԱԹԱՆԱՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ, ԱՌԱՋՆՈ|ՐԴ ԱԲ. ՈՒԽՏԻՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍԲ. ՆՇԱՆՍ ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄ.| ԹԻՎ.Ն ՀԱ͵Ց͵ՈՑ :ՉԼԲ: (1283):

*Հրատ. Բարխուդարեանց, 208 (ծանոթության մեջ և մի քանի բառ պակաս)։ Տէր-Մովսիսեան, 89ա (մի քանի բառ պակաս)։ Ջալալեան, II, 224։*

**751. ԽԱՉՔԱՐ**, *նախորդի նման և նույն ոճով, միևնույն վարպետի ստեղծագործություն. ճակատին Յիսուս, նստած բազկաթոռի վրա. կից է նախորդին հյուսիսից. քիվին՝ 1 տող.*



ՏՐ|. ԳՐԻԳՈՐ ՍՆՈ͵Ի͵ՑՈՂ ՏՐ. ԱԹԱՆԱՍԻ ՑԻՇ͵ԵՑԷՔ͵:

**Ծանոթ.** *Ժամանակով շատ մոտիկ նախորդին։*

*Հրատ. Բարխուդարեանց, 208 (ծանոթության մեջ)։ Տէր-Մովսիսեան, 89ա։ Ջալալեան, II, 224։*

**752. ԽԱՉՔԱՐ**, *ընկած է սրահի մեջ, գմբեթավոր եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց, ստորին մասը կոտրված. թերի 4 տող.*



Թ͵ՎԻՆ͵ :ՈԼԹ: (1290) ԵՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐԷՍ ՈՐ|ԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ ԿԱՆԳ'ՆԵՑԻ ԶԽԱ|'ՉՍ ՄԱԻՐ ԻՄՈ' ՇՈՒՇԿԱՆՆ. ՈՐՔ| 'ԵՐԿՐՊԱԳԷՔ' ՑԱՂ.ԱԻԹՍ ՑԻՇԵՑԷՔ

**Ծանոթ.** *Տեր-Մովսիսյանի այցելած ժամանակ արձանագրությունն ամբողջ է եղել. լրացնում ենք նրանից։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 96բ։*

**753. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է վանքի շրջապարսպի մեջ, արևելյան մուտքի մոտ, ներքուստ.*




Թ͵ՎԻՆ͵ :ՈԽԹ: (1200). ԱԾ.| ՈՂ|ՈՐՄ|Ի ԳՐ͵Գ'ՈՐ|ԻԿ'Ա. ԱՄ|'ԵՆ' · · · :

**754. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, ագուցված է պարսպից դուրս, դեպի հյուսիս 100 մետր հեռու, մատուռի արևմտյան պատին. 3 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻՍԱՐ
ԳԻՍԱԳՐԳ---
Ա ՄԼՔԻՆ

Ա.Ծ. ՈՂՈՐՄԻ ՍԱՐ/ԳԻՍԱ, ԳՐ[Ի]Գ[ՈՐ]|Ա, Մ[Է]Լ[Ի]ՔԻՆ:

**755. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, *բեմի կորության վրա, պատուհանի մոտ.*



ՇՆՈՐ[Հ]ԻՒՆ Ա̄Ծ ԵՍ ԷԱՉԻ, ՈՐԴԻ ԱՄ|ԻՐ ՀԱՍԱՆԱ, ՈՐԴՈ ՄԵԾ ԻՇԽԱ-ՆԻՆ ՊՌՈՇԱ ԵՒ ՄԱ|ՅՐՆ [Ի]Մ ՄԱՄՔԱՆ[Ի] ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒՏՎ|ԱՔ Զ[Հ]ՈՂ[Ս] · · Ի ԽԱՉԵՆԱԳԵՏԻ ՁՈՐՈՑ · · · · [ՍԲ]ԿԱ[Ն] ԹՈՂ[Ի]ԿԷՍ ՏՐ Ա|ԹԱՆ[Ա]Ս ԵՏ ԻՆՁ[Ի] ՊԱՏԱՐԱԳ ՋԱՄԷՆ |[Ե]ԿԵՂԵ-ՑԻՔՍ · · · · · · · · · · · · ՄԱՑ · · · · ՎԱՍՆ ԸՆԴԵՑՈՒԴԱ| · · · · · ԸՆԴՄԱՐ[Տ]ԿՈ[Ւ]ՍԻ ԵՂԻ · | · [ԹՎԻՆ] ՉԻ (1271):

*Հրատ. Բարխուդարեանց, 205 (զգալի սխալներով) Տէր-Մովսէսեան, 96ա (առել է նույն աղբյուրից)։*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ
(կորած, անվերծանելի և ծածկված ավերակների ու աղբակույտերի տակ)

**756. ՍՐԱՀ**, *պատի վրա, 2 տող.*

Կամաւն Ա̄յ. ես Սնպատ, որդի Վախտանկա շինեցի զգաւիթս եկեղեցւոյս և եսու զՇինաձոր իր սահմանովն և զԴոփուն տափն յեկեղեցիս:

*Հրատ. Տէր-Մովսէսեան, 88բ (որից և առնում ենք), Ջալալեանց, II. 237 (միայն առաջին տողն ունի)։*

**757. ՏԱՊԱՆԱՔԱՐ** *գավթի մեջ. վրան 7 տող.*

· · · · ի հայր · · · · · և ի երանեալն և Դադէի և Խադափ| աթոռակալն տէր Ցոհանէս|, եղբայր քաջ զաւրականին| Հասանա արքայնորհ իշխա|նին, հաւրն զինվորին Գրի|գորո աղաչեմ յիշէք ի բար|ին. թվ. :ՉԾԴ: (1305):

*Հրատ. Տէր-Մովսէսեան, 96բ (որից առնում ենք), Բարխուդարեանց, 206 (Ծանոթության մեջ. թվ. ՀՀԴ)։*

**758. ՏԱՊԱՆԱՔԱՐ** *գավթի մեջ, վրան 7 տող.*

Այս է հանգի|ստ Մամքանի|ն, ամուսնո| Հասանա, դստե|ր Քրդին և Խոր|իշահի, մաւր|Գրիգորո. աղա|չեմ յիշել ի բարի. թվ. :Չ—Դ:

Ծանոթ. *Բարխուդարյանցը թվականը նշանակել է :ՉԽԷ:, որը և ընդհանրացել է գրականության մեջ։ Տեր-Մովսիսյանը՝ միայն :Չ: Մեզ թվում է, որ սխալվում են, որովհետև հենց*

*Դաղի վանքում :ՉԿԱ: (1312) թ. ունի նվիրատվական մեծ և կարևոր արձանագրություն, հետևաբար տապանագրի վրա տառանիշը սխալ է վերծանվել, այն պետք է լինի :Կ:*

*Հրատ. Բարխուդարեանց, 206 (ծանոթ.)։ Տէր-Մովսիսեան, 96ա։*

**759. ՏԱՊԱՆԱԳԻՐ** *գավթի մեջ 6 տող.*

Թիւ :ՈԼ: (1181). Ես Սարգիս, որդի Աշոտա կանգնեցի զխաչս ի փրկութի(ւն) հոգո հանկստեան իմո. որք երկրպագէք յաղաւթս յիշեցջիք և Ած զձեզ յիշէ, ամէն:

Ծանոթ. *Հրատարակիչը տապանաքարերի շարքում է գրել, բայց ըստ բովանդակության խաչքար պետք է լինի։*

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 96բ։*

**760. ՏԱՊԱՆԱԳԻՐ** *գավթի մեջ.*

Թվին :ՈԼԱ: (1182). յիշեցէք. Ես Հասան կանգնեցի զխաչ եղբաւր իմո Վարհամա. յաղաւթ:

*Հրատ. Տէր-Մովսիսեան, 96բ։*

**761. ՏԱՊԱՆԱՔԱՐ** *գավթի մեջ, վրան*[1]

Զտէր Սարգիս . . . յիշեցէք ի բարի. թվ :ՉՁԲ: (1333):

*Հրատ. Բարխուդարեանց, 206 (ծանոթ.)։ Տէր-Մովսիսեան, 97ա։*

**762. ԽԱՉՔԱՐԻ** *վրա՝ տեղադրությունն անորոշ.*

Ես Մամայ թագուհի, ամուսին Հասանայ, դուստր Կուրիկայ թագաւորին կացաք յաւագութե. յամս :Լ: (30). ես և այրն իմ թողեալ զհայրենիս որդւոց մերոց, եկաք ի վանքս մօտ սր. Գրիգորիս, և որդին մեր համանուն նորին, և զգեցաք զձև միանձանց և կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ. որք երկրպագէք յաղօթս յիշեցէք. :ՈԼԱ: (1182) թվիս:

Ծանոթ. *Առնում ենք Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրությունից։*

*Հրատ. Շահխաթունեանց, II, 362։ Ջալալեանց, I, 205։ Բարխուդարեանց, 204։ Տէր-Մովսիսեան, 90բ։*

**763. ԽԱՉՔԱՐԻ** *երկու երեսներին.*

Անուն Ած. Ես տր. Գրիգորէս տղայութեամբ եկի ի դուռն եկեղեցւոյս, շատ աշխատանք արարի. իշխանութիւն շահ Թահմազին էր. զվանքս տուին տիուլ, ես ղաբուլ չարարի. գնացի նոր շէնն շինեցի երեք ջաղաց, երեք բաղչայ և եկի ի դուռն սբ. Առաքելոյս. շինեցի զխուց, որ եկեղեցւոյս մայն քաշէ, զբաղուբաղչէս և զջրաղացներս և այլ ամենայն աշխատանս եկեղեցւոյս վախմ տուի: Արդ՝ ով ոք այս գեղարանքերս և զիմ վախմերս հանել ջանայ ի սբ. Առաքելոյս, երեք հարիւր տասն և ութ հայրապետացն նզոված է. մասն ու բաժին ընդ Յուդայի և Կայենի և խաչահանուացն առցէ. և մեր մեղացս տէր է. և ով որ շէն պահէ և զմեզ յիշէ՝ վարձս ի Քրիստոսէ առցէ. ամէն. թուին :ՌԷ: (1558):

Ծանոթ. *Առնում ենք Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրությունից։*

*Հրատ. Շահխաթունեանց, II, 357։ Ջալալեանց, I, 200 (ի վերայ խաչին, որ կանգնեալք երկու երիս անուանեալ տեղւոյ մերձ ի վանս)։ Բարխուդարեանց, 209 (ծանոթության մեջ)։*

---

1 *Բարխուդարյանը գավթի մեջ հիշատակում է նաև Վախթանգ թագավորազնի, Արզու խաթունի, Հասանի, Գրիգորի, Զաքարիա կաթողիկոսի, Աթանաս և Գրիգոր կաթողիկոսների տապանաքարերը, բայց չի բերում տապանագրերը, իսկ Ջալալյանը (II, 223)՝ Սարգսի որդի Տղէկայ ի թվին հայոց :ՉԽԲ:*

### 764. ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՈՐՈՇ.

Կամաւն ամենակալին Այ. և տն. մերոյ Յի. այս մեր գիր է իշխանական հրամանի:

Ես Տուրունն, Սեյտին, Պռօշն, Գրիգորն, Հասանն և եղբարքն և որդիքն մեր զայս հաստատ սիգիլս տուաք տր. եպիսկոպոսին[1] և իւր եղբայր Մանուէ Աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԴադի վանն, զԽաթրի վանն, զԳետամէջն, որ մեր զերեզմանատունն է ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի վանորայքն մարդ չկայր, որ յառաջն կայր և շէն պահէր և զեկեղեցիքն լուսաւորէր. յայս պատճառէս երեսն գրաք և զայս տր. աթոռնին նորա ապսպրեցաք ապապարեցաք. և զերկու իշխանութիւն, որ է եպիսկոպոսութիւն և զպարոնութիւն էլ հէնց ի նորա յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթողիկոսն մեծ տր. Զաքարիային, տր. Աթանասին և տր. Սարգըսին էր տուեալ զԴաթի վանն, զԽաթրի վանն, զՀաղբատ իւր վիճակովն, նոյնպէս և այս հօգևոր տր. Գրիգոր կաթողիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և օրհնաբերական թղթիւ:

Ծանոթ. *Առնում ենք Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունից։*

*Հրատ. Շահխաթունեանց, II, 359։ Ջալալեանց, I, 202։ Բարխուդարեանց, 208։ Տէր-Մովսիսեան, 97։*

### 765. ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՈՐՈՇ.

Կամաւն ամենակալին Այ. ես Սէյտին, որդի պարոն Շանշին, թոռն պարոն Հասանայ. ես Գրիգորն, Հասանն, Պէկին, Ալթունն որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ. ես Այտինն որդի պարոն Տուրունին, թոռն պարոն Աղբուղին. ես Շանշան որդի Հասանայ, թոռն պարոն Ջահանշին. մէք չորս եղբարքս տուաք մեր վանորէիցս Ալահէն, զԽութ, զԽոզնենկս իւր չորս սահմանով. ի Զափարէն հանդէն Զազունանց ագարակ գեղովն, Բունչի աղբիւրովն, Թասանանց գետովն, Պետրոսապակ, որ մեր պապերն տուեալ են, զՍոխանանց, զԾովատեղն, Ջաչօռանեանց, Զօլբէկեանց, զՅրտնօտն, զՇիումանանց, զԳրիգորաթաղս, զԴաթի վանս իւր Քօլատակերովն, զՀերանանց Հակառակաբերթովն, Նաւի աղբիւրովն, Բերթաքարովն, Կռապատոցովն, Ողնովն, Խոզենակուց մեծ այգին՝ Մանանա-ձորովն, Ծաղիկանց, Եզնարածանց տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր հոգևոր էր. քանի որ իւր պէտքն է՝ վարէ Աստուծով ազատ է: Իսկ թէ այլ մարդ վարէ տասանորդն առնու և տայ վանքին անպատճառ: Այս եղև մեր ուխտ առաջի Աստուծոյ և սուրբ Դաթի առաքելոյս: Այդ՝ ով որ զկնի մեր այս վաղմիաքերս այլայլէ կամ խլէ, թէ յորդւոց և թոռանց մերոց և յազգայնոց իցէ, առաջի Այ. պարտական և ասերես լինի :ՅԺԸ: (318) Հայրապետաց նզովածէ. Կայենի և Յուդայի դասակից: Իսկ թէ յայլազգեաց և թուրքաց իցէ՝ իւր հալալն հարամ լինի և իւր փէյղամբարէն ապիզար լիցի, ամէն:

Ծանոթ. *Այս և նախորդ մեծ արձանագրությունները հակված ենք համարելու սիգել-ներ-փաստաթղթեր (ինչպես և անվանված է նախորդի մեջ) և ոչ թե վանքի պատերի վրա փորագրված արձանագրություններ։ Բացի բովանդակությունից կան նաև այլ փաստեր. ըստ Շահխաթունյանցի հրատարակության, Եսայի կաթողիկոսի տետրում կա մի հատված—*«Որդիք և թոռունք Դոփայ և վախմ նոցա». *այդ հատվածը չկա կաթողիկոսի նույն տետրից կա-*

[1] *Հրատարակիչների մոտ՝ տր. Աւագ եպիսկոպոսին։*

տարած Յովհաննես եպիսկոպոսի արտագրության մեջ, որը պահվում է Մատենադարանում և որը մենք օգտագործում ենք։ Այդ հատվածը պետք է համարել Շահխաթունյանցի լրացում։ Այսպիսի լրացում կա և իր՝ Եսայի կաթողիկոսի մոտ։

Ջալալյանցի մոտվին տեղադրումները շենքերի վրա նույնպես ճիշտ չեն. Նրա նշած շենքերն ամբողջովին կանգուն են (գմբեթավոր եկեղեցին և զանգակատունը), բայց նման արձանագրություններ չունեն։ Մնացած եկեղեցիները շինված են անտաշ քարերով և երկար արձանագրությունների տեղ չունեն։

Հրատ. Շահխաթունեանց, II, 359—360։ Ջալալեանց, I, 202—203։ Բարխուդարեանց, 206—209։ Տէր-Մովսիսեան, 97բ։

## 79. ԾԱՐ-ՋԱՌ ԳՅՈՒՂ

Այս գյուղը եղել է պատմական Վայկունիք գավառի կենտրոնը, ուր էին «Բաղանիք արքունականք» ջերմուկը, այժմյան Իստիսու առողջարանը։ Հետագայում գյուղի անունով Ծար է կոչվել ամբողջ գավառը։ Այս գավառը երբեմնի միացած է եղել Սոդքին, ինչպես երևում է Ստ. Օրբելյանի ցուցակներից։

Ծար գյուղը միշտ էլ եղել է իշխանանիստ կենտրոն, իսկ վերջին դարերում՝ մելիքանիստ։ Այս գյուղից էր XVI դարի պատմագիր Հովհաննես Ծարեցին։ Գյուղը ժամանակին շատ մեծ ու բարեշեն էր, փռված ընդարձակ հարթության վրա, իսկ կողքի բարձունքների վրա ունեցել է ամուր բերդ։ Հուշարձաններով հարուստ այդ գյուղում 1962 թ. հետևյալ պատկերը տեսանք.

Ա. սբ. Սարգիս, թաղածածկ մատուռ է, կառուցված 1279 թ., պատերի ստորին կես մասերը շինված են մեծ և սրբատաշ քարերով, վերին մասերը կոփածո են, որը հետևանք է հետագա վերանորոգման, կանգուն է։ Մատուռի արևելյան կողմից կցված են երկու սենյականման շենքեր, որոնց պատերի մեջ օգտագործել են խաչքարեր և տապանաքարեր. դրանք այժմ վեր են ածվել պահեստի։ Այս մատուռի շրջապատում եղել են բազմաթիվ խաչքարեր, որոնք իսպառ անհետացել են։

Բ. Գերեզմանատուն. եղել է շատ ընդարձակ. մնացել են գետնի մեջ խրված անմշակ մի քանի տապանաքարեր և մի գեղաքանդակ խաչքար՝ մեծ արձանագրությամբ (1236 թ.)։

Գ. Բնակելի տուն. մի հոյակապ գլխատուն է, շատ ընդարձակ, չորս միակտուր քարե սյուները պահում են փայտածածկ կտուրը, որի կենտրոնում սովորական լուսանցքն է։ Սյուների և՛ խարիսխները, և՛ խոյակները նույնպես քարից են և լավ մշակված ու ձևավորված։ Պատերն արտաքուստ սրբատաշ են. այդպես են նաև այս գլխատան շուրջը եղած մի քանի ավելի մանր, սենյականման շինությունները։ Համաձայն արձանագրության, այս տունը շինված է 1658 թվականին։ Գյուղում այս քարասյուն տունը հայտնի է «Դաշ դիրալլի դամ» անունով, և նրա մեջ ապրում է Մեհտին Իսմալըլ Մուսա օղլու ընտանիքը։

Այս հնագույն և հազվագյուտ գլխատունը, որը ճշտորեն թվագրված է և փայտի փոխարեն քարե սյուների վրա կանգնած, անհայտ է մնացել ժողովրդական տների ուսումնասիրողներին։ Նման բախտի են արժանացել նաև հենց այս գյուղում մեր տեսած՝ համակ փայտաշեն այն կառույցները, որոնց արժեքավոր նկարագրությունը տվել է XI դարի աշխարհիկ նշանավոր մտավորական Գրիգոր Մագիստրոսը։ Բերում ենք այդ հատվածը.

«Գերանք գերակատարք և երկայնաձիգք, որ է վկայարան սրբոյն Յակոբայ. ամենայն կահք տաճարին գերակալ տախտակք և խոյակք և խարիսխք և թակաղաղք և զդրունս և զսեամս հանդերձ բարաւորօք և ներքոյ զատակս կազմեալ ի միոջ ծառէ յանմանէ Գիոյն գոլ առէին. զնա և զայլս ոմանս ի նոյն աշխարհին ընդարձակագոյն սրահք և միջոցք այնմ տաճարի տեսեալ մեր, որ գրէթէ այսպիսի ոչ այլ արեք, բայց միայն ի թագաւորեալ քաղաքին»[1]— այսինքն Անիում։

---

[1] «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, ՀՁ, էջ 221։